ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-7/2016

Պետության կարիքների համար Հայաստանի Հանրապետության միջպետական եվ հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային եվ ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման

ք. Երևան <<21>> հունվարի 2016թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԼԵՎՈՆ ԵՐԿՐՈՐԴ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ֆ. Անտոնյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2015թ. դեկտեմբերի 21-ին կնքված ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-7 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի և Նոյեմբերյանի տարածաշրջանների միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն սույն Համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2016 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

1.4 Սույն Պայմանագրով սահմանված 2016 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը կատարված աշխատանքների համար վճարումը կիրականացվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 276 695 822 (երկու հարյուր յոթանասունվեց միլիոն վեց հարյուր իննսունհինգ հազար ութ հարյուր քսաներկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում.

- Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 132 299 376 (մեկ հարյուր երեսուներկու միլիոն երկու հարյուր իննսունինը հազար երեք հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,
- Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 144 396 446 (մեկ հարյուր քառասունչորս միլիոն երեք հարյուր իննսունվեց հազար չորս հարյուր քառասունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Սույն համաձայնագրով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների համար կապալառուին կտրամադրվի կանխավճար՝ համաձայնագրով նախարեսված աշխատանքների ընդհանուր գումարի մինչև 10 (տաս) տոկոսի չափով. Պայմանով, որ Կապալառուն նախապես Պատվիրատուին կներկայացնի երաշխիքի ձևով կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով:

2.3 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի N 2 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

2.4 կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	«ԼԵՎՈՆ ԵՐԿՐՈՐԴ» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 28	ՀՀ, Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան,
Կենտրոնական Գանձապետարան	Նոյեմբերի 29-ի փ. 21
Հ/Հ 900011012136	«Արդշինբանկ» ՓԲԸ, Նոյեմբերյան մ/ճ
ԳՏՀՀ 02565518	Հ/Հ 24768002704900000
(ստորագրություն)	ԳՏՀՀ 07403208
Կ.Տ.	(ստորագրություն)
	Կ.Տ.

Հավելված 1
«21» հունվարի 2016թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-7/2016 համաձայնագրի

Գնման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Գնումը՝ 2016թ				Ընդամենը
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
[redacted]						
1	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների	31,398,049,0	41,873,317,0	37,220,726,0	21,807,284,0	132,299,376,0
2	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների	36,308,545,0	44,554,844,0	39,604,306,0	23,928,751,0	144,396,446,0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 90001012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԼԵՎՈՆ ԵՐԿՐՈՐԴ» ՍՊԸ
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան,
Նոյեմբերի 29-ի փ. 21
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նոյեմբերյան մ/ճ
Հ/Հ 2476800270490000
ՀՎՀՀ 07403208

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
<<21>> հունվարի 2016թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-7/2016 համաձայնագրի

Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

ՀՀ	Ձեռքբերվող աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												Ընդամենը տարի
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների	21,978,634,0	21,978,634,0	21,978,634,0	58,615,704,0	58,615,704,0	58,615,704,0	99,325,874,0	99,325,874,0	99,325,874,0	132,299,376,0	132,299,376,0	132,299,376,0	132,299,376,0
2	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների	37,314,028,0	37,314,028,0	37,314,028,0	73,181,919,0	73,181,919,0	73,181,919,0	112,167,407,0	112,167,407,0	112,167,407,0	144,396,446,0	144,396,446,0	144,396,446,0	144,396,446,0

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
ՀՎՀՀ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԼԵՎՈՆ ԵՐԿՐՈՐԴ» ՍՊԸ
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան,
Նոյեմբերի 29-ի փ. 21
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նոյեմբերյան մ/հ
ՀՎՀՀ 24760022049000
ՀՎՀՀ 07403208

(ստորագրություն)
Կ.Տ.

20 հունվարի 2016թ.

Թիվ 01-56

ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 161510159

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) և «ԼԵՎՈՆ ԵՐԿՐՈՐԴ» ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև 21.12.2015թ.-ին կնքված Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պետական գնման թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՃԻԳ-16/1-7 պայմանագրից բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ բենեֆիցիար)՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել 13 838 613 (տասներեք միլիոն ութ հարյուր երեսունութ հազար վեց հարյուր տասներեք) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի՝ ք. Երևան, Նալբանդյան 28, Կենտրոնական գանձապետարանի 900001034207 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Սույն Երաշխիքը գործում է Երաշխիքի տրամադրման պահից մինչև 30 դեկտեմբերի 2016թ.-ը ներառյալ:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացնում է թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՃԻԳ-16/1-7 պայմանագրի և թիվ 161510159 Երաշխիքի պատճենները:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա Բենեֆիցիարն իրավունք ունի Երաշխիք տվող անձի բանկից պահանջելու Երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել Երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն Երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ Բենեֆիցիարի կողմից սույն Երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ Երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա Երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր

ուշացված օրվա համար՝ երաշխիքի գումարի 0.05 տոկոսի չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի պահանջը, եթե

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին,

2) պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին գրավոր տեղեկացնում է Բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՓՄՁ և կորպորատիվ բիզնեսի օ[illegible]
գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Ն. Նազարյան

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՄԻԳ-16/1-7»

ք. Երևան «31» դեկտեմբերի 2015թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԼԵՎՈՆ ԵՐԿՐՈՐԴ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ֆ. Անտոնյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի և Նոյեմբերյանի տարածաշրջանների միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և կատարման ժամկետ է սահմանվում մինչև՝ 31.12.2020թ.-ը ներառյալ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 /երկու/ օրինակ (Հավելված N 2) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 2.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 40 /քառասուն/ օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 276 695 822 (երկու հարյուր յոթանասունվեց միլիոն վեց հարյուր իննսունհինգ հազար ութ հարյուր քսաներկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում.

- Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 132 299 376 (մեկ հարյուր երեսուներկու միլիոն երկու հարյուր իննսունինը հազար երեք հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

- Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 144 396 446 (մեկ հարյուր քառասունչորս միլիոն երեք հարյուր իննսունվեց հազար չորս հարյուր քառասունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 2017 և հաջորդող տարիներին աշխատանքները կկատարվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրի կնքման տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

---

[1] *Տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման և պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը կլուծարվի, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվի:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 2.1 հավելվածները կազմված՝ 11 էջից, հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	«ԼԵՎՈՆ ԵՐԿՐՈՐԴ» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 28	ՀՀ, Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան, Նոյեմբերի 29-ի փ. 21
Կենտրոնական Գանձապետարան	«Արդշինբանկ» ՓԲԸ, Նոյեմբերյան մ/ճ
Հ/Հ 900011012136	Հ/Հ 2476800270490000
ՀՎՀՀ 02565518	ՀՎՀՀ 07403208
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
«21» դեկտեմբեր 2015թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՇԻԳ-16/1-7
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների

I. Տեխնիկական պահանջներ

1. Ապահովել միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների և արհեստական կառույցների պահպանվածությունը այնպիսի վիճակում, որը համապատասխանում է տարվա ցանկացած ժամանակ անվտանգ երթևեկության ապահովման պահանջներին:

2. Ապահովել սպասարկվող ճանապարհահատվածներին տրանսպորտի շուրջօրյա և անվտանգ երթևեկությունը համաձայն ճանապարհների պահպանման կանոնների:

3. Ընթացիկ ձմեռային (ձմեռվա ժամանակահատված) պահպանման պահանջներն են՝

- Ճանապարհների կոնստրուկտիվ տարրերի և երթևեկամասերում թույլ չտալ աղբի, ձյան և սառույցի առկայություն
- Ձյան առատ տեղումների ընթացքում թույլ չտալ 5 սմ-ից ավել շերտի գոյացում: Ուժեղ ձնաբքերի դադարելուց անմիջապես հետո սկսել և ոչ ավելի քան 4 ժամվա ընթացքում ավարտել ճանապարհների մաքրումը
- Մերկասառույցի դեմ պայքարի համար ժամանակին կիրառել աղի և ավազի ցանումը
- Աշխատանքների կատարման ընթացքում ապահովել երթևեկության անվտանգությունը
- Առատ ձյան տեղումների և ուժեղ ձնաբքերի ժամանակ, ճանապարհների մաքրման տեխնիկապես անհնարինության կամ աննպատակահարմարության դեպքում,

ճանապարհների փակումն ու բացումը կատարել Պատվիրատուի և ավտոտեսչության տեղական մարմինների համաձայնությամբ

- Ստեղծել շուրջօրյա հերթապահություն, վարել տվյալների գրանցման մատյան և ամեն օր, ժամը 6-8-ը, 12-14-ը և 18-20-ը Պատվիրատուի հերթապահությանը տվյալներ հայտնել, տեղում եղանակի ու ճանապարհների վիճակի մասին:
- Սպասարկվող ավտոճանապարհների տարածքում ունենալ առնվազն մեկ ստացիոնար հենակետ՝ ապահոված հոսանքով, կապի միջոցներով բանվորների և մեխանիզատորների համար ջեռուցվող հանգստյան սենյակով:
- Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման կարգի» մեթոդական ցուցումների 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:

4. Ընթացիկ ամառային («ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ» ժամանակահատված) պահպանման և շահագործման պահանջներն են՝

- Ճանապարհների շահագործման և պահպանման կանոնների համաձայն ապահովել սպասարկվող ավտոճանապարհների հետևյալ կոնստրուկտիվ տարրերի պահպանվածությունը՝
  - Հողային պաստառ և օտարման շերտ
  - Երթևեկելի մաս
- Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների կարգի» մեթոդական ցուցումների 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ամառային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:

5. Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակը և սպասարկման մակարդակները 2016թ. համար՝ համաձայն N 1.1 հավելվածի և N 1.2 հավելվածի:

II. Ձեռքբերման պայմաններ

1. Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման ժամկետը սահմանվում է 5 տարի՝ 01.01.2016թ.-31.12.2020թ.:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի
նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԼԵՎՈՆ ԵՐԿՐՈՐԴ» ՍՊԸ
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան,
Նոյեմբերի 29-ի փ. 21
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նոյեմբերյան մ/ճ
Հ/Հ 2476800270490000
ՀՎՀՀ 07403208

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակը, սպասարկման մակարդակները և սանմանային արժեքները 2016 թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը

Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Ավտոճանապարհի տեխնիկական կարգը	Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/	Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը	Սպասարկման պահանջվող մակարդակ	Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդամենը /ՀՀ դրամ/
1	2	3	4	5	6	7	8
Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ							
Մ4, Երևան-Սևան-Իջևան-Ադր.սահման կմ111,7-կմ148,0	Միջպետական II-IV	36,30		Լավ	36,30	394 800	14 331 240
Մ16, Մ4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ6 կմ 0-կմ12,0	Միջպետական II-IV	12,00		Լավ	12,00	394 800	4 737 600
Հ26, Մ4-Ենոքավան-Կարմիր գյուղ-Մ16 կմ 0- կմ 25,0	Հանրապետական II-IV	25,00		Բավարար	25,00	241 800	6 045 000
Մոտեցում Մակարավանքի հուշարձանին կմ0-կմ11,2	Հանրապետական II-IV	11,20		Միջին	11.2	248 400	2 782 080
Հ36, Մ4-Իջևան-Նավուր-Բերդ-Այգեպար կմ 0-կմ 24,7	Հանրապետական II-IV	24,70		Միջին	24.7	248 400	6 135 480
Հ37, Մ4-Այգեհովիտ-Վազաշեն-Պարավաքար-Այգեպար կմ 0- կմ 17,3	Հանրապետական II-IV	17,30		Միջին	17,30	248 400	4 297 320
Հ61, Մ16-Բերքաբեր կմ 0-կմ 3,8	Հանրապետական II-IV	3,80		Բավարար	3,80	241 800	918 840
Ընդամենը		**130,30**			**123,90**		**39 247 560**
Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ							
Մ4, Երևան-Սևան-Իջևան-Ադր.սահման կմ111,7-կմ148,0	Միջպետական II-IV	36,30	Լավ ՄԼ(I)	Միջին	6,00	982 800	5 896 800
			Բավարար ՄԲ(II)	Միջին	30,30	1 236 000	37 450 800
Մ16, Մ4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ6 կմ 0-կմ12,0	Միջպետական II-IV	12,00	Լավ ՄԼ(I)	Միջին	6,00	982 800	5 896 800
			Բավարար ՄԲ(II)	Միջին	6,00	1 236 000	7 416 000
Հ26, Մ4-Ենոքավան-Կարմիր գյուղ-Մ16 կմ 0- կմ 25,0	Հանրապետական II-IV	25,00	Լավ ՀԼ(I)	Միջին	6,27	696 000	4 363 920
			Բավարար ՄԲ(II)	Բավարար	3,73	559 200	2 085 816
Մոտեցում Մակարավանքի հուշարձանին կմ0-կմ11,2	Հանրապետական II-IV	11,20	Լավ ՀԼ(I)	Լավ	3,70	729 600	2 699 520
			Լավ ՀԼ(I)	Միջին	4,10	696 000	2 575 200

Հ36,Մ4-Իջևան-Նավուր-Բերդ-Այգեպար կմ 0-կմ 24,7	Հանրապետական II-IV	24,70	Երաշխիկ.ՀԵ(0)	Լավ	0,60	445 200	267 120
			Լավ ՀԼ(I)	Միջին	3,70	696 000	2 575 200
			Բավարար ՀԲ(II)	Բավարար	16,70	559 200	9 338 640
Հ37, Մ4-Այգեհովիտ-Վազաշեն-Պարավաքար-Այգեպար կմ 0- կմ 17.3	Հանրապետական II-IV	17,30	Լավ ՀԼ(I)	Միջին	16,30	696 000	11 344 800
			Բավարար ՀԲ(II)	Միջին	1,00	862 800	862 800
Հ61, Մ16-Բերքաբեր կմ 0-կմ 3,8	Հանրապետական II-IV	3,80	Վատ		0,00		
Ընդամենը		**130,30**			**104,40**		**93 051 816**
					Ընդամենը Իջևանի տարածաշրջանով		**132 299 376**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակը, սպասարկման մակարդակները և սանմանային արժեքները 2016 թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը

Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Ավտոճանապարհի տեխնիկական կարգը	Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/	Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը	Սպասարկման պահանջվող մակարդակ	Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/	Միավորի գինը /հազ. դրամ/	Ընդամենը /հազ. դրամ/
1	2	3	4	5	6	7	8
Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ							
Մ6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման կմ 76,9-կմ 91,2	Միջպետական II-IV	14,30		Լավ	14,30	411,256	5880,961
Մ16, Մ4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ6 կմ12.0-կմ59,0	Միջպետական II-IV	47,00		Լավ	47,00	411,256	19329,032
Հ54, Մ16-Բաղանիս-Մ16 կմ 0-կմ 6.3	Հանրապետական II-IV	6,30		Միջին	6,30	289,170	1821,771
Հ26, Մ4-Ենոքավան-Կարմիր գյուղ-Մ16 կմ 25.0- կմ 71.8	Հանրապետական II-IV	46,80		Բավարար	46,80	268,725	12576,330
Հ62, Նոյեմբերյան-Դովեղ կմ0-կմ3,5	Հանրապետական II-IV	3,50		Բավարար	3,50	268,725	940,538
Հ63, Մ16-Կոթի-Բարեկամավան կմ0-կմ 18,0	Հանրապետական II-IV	18,00		Բավարար	18,00	268,725	4837,050
Ընդամենը		135,90			135,90		45385,681
Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ							
Մ6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման կմ 76,9-կմ 91,2	Միջպետական II-IV	14,30	Լավ ՄԼ(I)	Լավ	0,00	599,42	0,000
Մ16, Մ4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ6 կմ12.0-կմ59,0	Միջպետական II-IV	47,00	Լավ ՄԼ(I)	Միջին	15,00	540,94	8114,110
			Բավարարար ՄԲ(II)	Միջին	32,00	1160,79	37145,280
Հ26, Մ4-Ենոքավան-Կարմիր գյուղ-Մ16 կմ25,0- կմ 71.8	Հանրապետական II-IV	46,80	Բավարարար ՀԲ(II)	Բավարար	31,80	1108,656	35255,261

Հ54, Մ16-Բաղանիս-Մ16 կմ 0-կմ 6.3	Հանրապետական II-IV	6,30	Լավ ՀԼ(I)	Միջին	2,00	573,07	1146,140
			Բավարարար ՀԲ(II)	Միջին	4,30	1169,53	5028,979
Հ62, Նոյեմբերյան-Դովեղ կմ0-կմ3,5	Հանրապետական II-IV	3,50	Լավ ՀԼ(I)	Միջին	3,50	573,07	2005,745
Հ63, Մ16-Կոթի-Բարեկամավան կմ0-կմ 18,0	Հանրապետական II-IV	18,00	Լավ ՀԼ(I)	Միջին	18,00	573,07	10315,260
Ընդամենը		135,90			106,60		99010,765
					Ընդամենը Նոյեմբերյանի տարածաշրջանով		144396,446

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի
նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԼԵՎՈՆ ԵՐԿՐՈՐԴ» ՍՊԸ
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան,
Նոյեմբերի 29-ի փ. 21
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նոյեմբերյան մ/ճ
Հ/Հ 2476800270490000
ՀՎՀՀ 07403208

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.2

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջան

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ

I տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային (ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ) պահպանման արժեքը (ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
Երաշխիքային ՄԵ	599000		
Լավ ՄԼ (I)	1015000	995000	
Բավարար ՄԲ (II)		1530000	1505000

Աղ N 6. Աղյուսակ 6.1

II-IV տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային (ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ) պահպանման արժեքը (ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
Երաշխիքային ՄԵ	403000		
Լավ ՄԼ (I)	823000	819000	
Բավարար ՄԲ (II)		1030000	1050000

II-IV տեխնիկական կարգի հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային (ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ) պահպանման արժեքը (ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
Երաշխիքային ՄԵ	371000		
Լավ ՄԼ (I)	608000	580000	
Բավարար ՄԲ (II)		719000	466000

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման արժեքը (ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
I տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհներ	520000	512000	481000
II-IV տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհներ	329000	322000	316000
II-IV տեխնիկական կարգի հանրապետական նշանակության ավտոճանապարհներ	218000	207000	201500

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջան
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ
I տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային (ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ) պահպանման արժեքը (Հազ. ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
Երաշխիքային ՄԵ	602.754		
Լավ ՄԼ (I)	1015.999	999.724	
Բավարար ՄԲ (II)		1529.741	1510.658

Հավ N 6. Աղյուսակ 6.1

II-IV տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային (ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ) պահպանման արժեքը (Հազ. ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
Երաշխիքային ՄԵ	401.247		
Լավ ՄԼ (I)	499.514	450.784	
Բավարար ՄԲ (II)		967.327	958.247

II-IV տեխնիկական կարգի հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային (ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ) պահպանման արժեքը (Հազ. ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
Երաշխիքային ՄԵ	368.785		
Լավ ՄԼ (I)	489.657	477.559	
Բավարար ՄԲ (II)		974.610	923.880

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման արժեքը (Հազ. ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
I տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհներ	529.111	520.147	489.222
II-IV տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհներ	342.713	335.412	329.874
II-IV տեխնիկական կարգի հանրապետական նշանակության ավտոճանապարհներ	249.578	240.975	223.938

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԼԵՎՈՆ ԵՐԿՐՈՐԴ» ՍՊԸ
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան, Նոյեմբերի 29-ի փ. 21
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նոյեմբերյան մ/ճ
Հ/Հ 24768002704900000
ՀՎՀՀ 07403208

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
«21» դեկտեմբեր 2015թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁՄ-15/1-ՏՇԻԳ-16/1-7
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
«21» դեկտեմբերի 2015թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՄԻԳ-16/1-7
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------ -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-7»

ք. Երևան «14» դեկտեմբեր 2015 թ.

«ԼԵՎՈՆ ԵՐԿՐՈՐԴ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ֆ. Անտոնյանի (անձնագիր՝ N AM0491201, տրված 27.10.2011թ., 047-ի կողմից), ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի և Նոյեմբերյանի տարածաշրջանների միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների ձեռքբերման «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1» ծածկագրով գնման ընթացակարգին և պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում, ուստի սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրի՝ Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը, կից ներկայացված վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:

1.2. Ընկերության կողմից սույն ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու, չկատարելու կամ կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին՝ վճարելու պահանջագրի մեջ նշված գումարը:

1.3. Պահանջագիրը բանկ ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում Պատվիրատուին գումարը բանկից անկախ պատճառներով չփոխանցվելու դեպքում, Պատվիրատուն Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ԼԵՎՈՆ ԵՐԿՐՈՐԴ» ՍՊԸ
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան, Նոյեմբերի 29-ի փ. 21
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նոյեմբերյան մ/ճ
Հ/Հ 2476800270490000
ՀՎՀՀ 07403208

տնօրեն՝ Ֆ. Անտոնյան
_____ (ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝
_____ (ստորագրություն)

Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N 1

"__" _____ 20 թ.

Վճարող՝ <<ԼԵՎՈՆ ԵՐԿՐՈՐԴ>> ՍՊԸ ՀՎՀՀ - 07403208	ԴԵԲԵՏ 2476800270490000	ԳՈՒՄԱՐ 27669583
Վճարողի բանկը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ, Նոյեմբերյան մ/ճ		
Շահառու՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՎՀՀ - 02565518	ԿՐԵԴԻՏ	ԳՈՒՄԱՐ (ԲԱՌԵՐՈՎ) քսանյոթ միլիոն վեց հարյուր վաթսունինը հազար հինգ հարյուր ութսուներեք ՀՀ դրամ
Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան	հշ.N 900005000758	

Գումարը բառերով՝ քսանյոթ միլիոն վեց հարյուր վաթսունինը հազար հինգ հարյուր ութսուներեք ՀՀ դրամ

Գնման գործընթացի ծածկագիրը ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1

Վճարման նպատակը
պայմանագրի կատարման ապահովում, տուժանքի մասին համաձայնություն՝ N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-7

Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

Կից____էջ

Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ Կ.Տ.	Վճարողի ստորագրությունները / Ֆ. Անտոնյան / /_____/ Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից /_____/ <<__>>_____20__թ. Կ.Տ.	Կատարված է վճարողի բանկի կողմից /_____/ <<__>>_____20__թ. Կ.Տ

ACBA-CREDIT AGRICOLE BANK

Թիվ 01-1342

Քսանմեկը դեկտեմբերի երկու հազար տասնհինգ թվականի

ք. Երևան

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

Հիմք ընդունելով «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կանոնադրությունը՝ սույնով լիազորում եմ.

1. Բանկի ՓՄՁ և Կորպորատիվ բիզնեսի գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Նորիկ Նազարյանին (անձնագիր՝ AK0505682, տրված՝ 18/05/2010թ., 057-ի կողմից) և/կամ Գործառնական կառավարման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Նիկոլայ Հովհաննիսյանին (անձնագիր՝ AK0472074, տրված՝ 02/04/2010թ., 001-ի կողմից) և/կամ Գյուղատնտեսական բիզնեսի գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Արսեն Պետրոսյանին (անձնագիր՝ AH0637888, տրված՝ 30/07/2008թ., 048-ի կողմից) և/կամ Մանրածախ բիզնեսի գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Սեդրակ Ջավադյանին (անձնագիր՝ AK0320608, տրված 003-ի կողմից, 19/06/2009թ.) և/կամ Ֆինանսական գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Ստյոպա Ջաքինյանին (անձնագիր AH0582237, տրված 056-ի կողմից, 14/05/2008թ.) ստորագրել բանկային ավանդի, բանկային հաշվի, վարկային, գրավի, հիփոթեքի, հաջորդող հիփոթեքի և/կամ գրավի, երաշխավորության, դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգ), բանկային երաշխիքի և փաստաթղթային ակրեդիտիվի պայմանագրեր, հաջորդող գրավի թույլտվության գրություններ, երաշխիքային և վարկային նամակներ (ակրեդիտիվ), ACBA ONLINE համակարգով ծառայությունների մատուցման, աշխատավարձերի սպասարկման, ապառիկի համագործակցության, շարժական և անշարժ գույքի առուվաճառքի և վարձակալության, կապալի, ծառայությունների մատուցման և այլ պայմանագրեր, առանց հաշվի բացման փոխանցումները հաճախորդի հաշվին փոխանցելու վերաբերյալ համաձայնագրեր, գույքը Բանկում գրավադրելու պարտավորագրեր, գրավի նախնական պայմանագրեր, վերը նշված բոլոր պայմանագրերը լուծելու և դրանցում լրացումներ և փոփոխություններ կատարելու համաձայնագրեր, արբիտրաժային համաձայնություններ, անշարժ և շարժական գույքն արգելանքի տակ վերցնելու և հանելու գրություններ, Բանկում գրավադրված գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու, վաճառելու, նվիրատվություն կատարելու, գրավադրված գույքի հետ փոփոխություններ կատարելու (ներառյալ՝ սեփականատիրոջ փոփոխություն), գրավադրված գույքի սեփականության իրավունքի վկայականում փոփոխություններ կատարելու համաձայնություններ, ստորագրել վարկային փաթեթի մեջ ներառվող այլ փաստաթղթեր, հաջորդող գրավի թույլտվություն ստանալու գրություններ, վավերացնել փաստաթղթերի պատճենների համապատասխանությունը բնօրինակին, կատարել հարցումներ, հանդես գալ նոտարական գրասենյակներում, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ինչպես նաև ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանության» ծառայության համապատասխան ստորաբաժանումներում՝ գրավի իրավունքը նոտարական վավերացման և պետական գրանցման ներակայացնելու համար, կատարել վերը նշված լիազորությունները իրականացնելու հետ կապված բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2. Սույն լիազորագիրն ուժի մեջ է մտնում երկու հազար տասնվեց թվականի հունվարի մեկից և գործում է մինչև երկու հազար տասնվեց թվականի դեկտեմբերի երեսունմեկը (ներառյալ):

Գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյան

0009, Երևան, Բայրոնի 1 Հեռախոս. (374-10) 31-88-88, Հեռապատճեն. (374-10) 54-34-85 Էլ.-փոստ՝ acba@acba.am http:// www.acba.am
0009, 1 Byron street, Yerevan Phone: (374-10) 31-88-88, Fax: (374-10) 54-34-85 E-mail: acba@acba.am http:// www.acba.am